

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԷՐՏԵՐԵԱՆ

ՆՈՆԵՆԻՆ

Նոնենի մըն էր, թարմ եւ անոյշ, նման մեր պարտէզներու հարսնետու ծառին, ապառաժներու սիրտէն հասակ առած, ճիշդ քովիկը վանքի հնադրոշմ դարպասին: Անօրինակ էր իր ներակայութիւնը այդ ձիւնամերձ բարձունքին՝ մայրիներու, թեղօշներու եւ անսեռ եւ անանուն ծառերու հանդէսին մէջ, կարմիր վերքեր թելադրող իր ծաղիկներով: Վանականներէն ոչ ոք կը յիշէր անոր մանկութիւնը: Հոն էր անիկա ըստ աւանդութեան, երկրաշարժով վանքի վերջին կործանումէն ալ առաջ, նոյն հասակով ու գեղեցկութեամբ:

Գարնան, երկար ամիսներով ամպերէ կալանաւոր արեւը երբ քիչ մը կը մեղմէր ձիւներուն ճերմակ սարսափը, արձակելով խոտերուն ակունքները եւ ջուրերու աչքերը, երեք բլուրներուն վերեւ սկիհի մը պէս ամբարձիկ մենաստանը կը քաղցրանար, դրախտներէ փրցուած պատկերի մը պէս: Այն ատեն զոյգ մը թռչուններ, քիչ մը տարբեր այդ մարգերուն ընտանի թեւաւորներէն, կու գային հանգչելու նոնենիի ոստերուն՝ եւ կտուց-կտուցի կ'արձակէին տարօրինակ եւ ուշադրութիւն հրաւիրող ճռուողիւններ: Կը նայէին բան մը որոնողի աչքերով, լեռներուն ծոցը խաղաղ նստած վանքին եւ մերթ երգելէ դադրած՝ կը թուէին մտիկ ընել ջուրերու ձայնին, որ միօրինակ քրթմնջիւններով կը լեցնէր նուիրագործուած լռութիւնը այդ վայրերուն: Օր մը միայն անոնք հիւր կը մնային կարմիր այդ ծաղիկներուն, եւ կը մեկնէին: Վանականները գիտէին ասիկա եւ ամէն գարնան կ'սպասէին անոնց:

Նոնենի մըն էր, աղուոր ու անոյշ, տարբեր իր նմաններէն, վասնզի երբեմն ամենէն խորունկ ձիւներուն երբ ձմեռուան վհուկը անշարժութեան կը մատնէր լեռները, գետերը, ճամբաները, եւ կը պարպէր երկինքը արեւէն ու թռչուններէն, նոնենին ծաղիկ կը բանար, արիւնէն աւելի կարմիր՝ նման պզտիկ սիրտերու:

Նոնենին իր պատմութիւնը ունէր: Վանականներ իրարմէ լսած հեքիաթային գեղեցկութեամբ կը պատմէին թէ շատ տարիներ առաջ, իրիկուն մը, մենաստանի դարպասին առջեւ կանգ էր առած պատանի մը, երբ արեւը շրջուած բաժակի մը պէս կը պարպուէր հանդիպակաց լեռներու շրթունքին: Յոգնած ըլլալ կը թուէր ան, եւ փոշիի թեթեւ խաւ կար անոր թարթիչներուն: Տխուր էր նայուածքը, հակառակ իր ոսկի մազերու պարոյրին: Կու գար հեռուններէն, տժգոյն անոր երեսին՝ ցաւն իր ոստայնն էր փոքր եւ անոր մատաղ շրթներուն՝ հեւքը խորունկ թաղուած կսկիծի:

Դոնապանը ներս առաւ պատանին եւ սխրանքով նայեցաւ անոր մեղրագոյն մազերուն: Ի՞նչ կը տեսնէր այդ պատկերին ներքեւ, զառամ ծերունին, կէս ճամբան մնացած վանականը, որ ամբողջ կէս դար այդ դարպասի մուտքին թառած, գոցեր ու բացէր էր դուռը, ներս առնելով պատանութիւններ, հասուն մեղքերը մարդոց եւ անոնց ըղձախնքները անհուն: Պատանին ապրեցաւ մենաստանին ծոցը, աղօթեց, հսկեց, երբեմն զամբիւղ հիւսեց եւ շատ անգամներ մօտիկ անտառէն փայտ շալկած բերաւ: Շատ քիչեր գիտցան թէ ո՞վ էր ան, ուրկէ՞ կու գար, բայց բոլորը գիտէին թէ

մեծ վիշտ մը ունէր, աւելի մեծ քան իրենց բոլորինը միասին: Տարիները կը սահէին եւ կ'աւելնար դաշկուծիւնը անոր դէմքին, ուրկէ պատանութիւնը կաթ-կաթ կ'իյնար անոր խուցի յատակին:

Երբեմն սակայն անտառէն դարձին, իրեն կը թուէր թէ կը լայննային պարիսպները վանքին, ու ինք թեւեր կը բանար դէպի աշխարհն իր մանկութեան: Մշուշին ծոցէն կտոր-կտոր կը շինուէր իր հայրենի տունը, կռթնած խոշոր ընկուզենիին, որուն ներքեւ իր բարի աչքերով մայրը, մագաղաթի մը էջերէն դուրս կարկառուած կարծէք: Բարձրահասակ ու խստադէմ էր իր հայրը, որ միշտ խիստ խօսք ունէր եւ կծու շեշտ հովիւին ու այգեպանին: Յետոյ, քոյրը աղուոր ու անոյշ: Այս բոլորը՝ ընդարձակ կառքի մը մէջ կը հեռանային իրմէն, բխումի իրենց ծովովը:

Ու յետոյ արիւնոտ մշուշի մը մէջէն կարծէք կը կազմուէր դէմքը գետակէն անդին ապրող էակին, բոցի շրջանակի մը մէջ: Անոր աչքերը տաք էին գարնան արեւին մէջ թեւ բացած մանիշակի մը նման: Անիկա ձեւն իսկ էր այն աստուածային անուրջին, որուն ցոլքը երբեք չի մարիր մեր ներսը: Մշուշը կը թանձրանար ու կը լեցնէր իր շուրջը, եւ միշտ շինուող ու քակտուող պատկերը կը հեռանար լեռներու ետին, երբ իրիկուան կոշնակը ետ կը բերէր զինք վանքի պարիսպներուն: Առանց գիտնալու կրկնած կ'ըլլար գիրերը անոր անունին, կոշնակի հատ ընդ հատ զարկերուն համընթաց, վախնալով սակայն բառը կազմելէ:

Կէս գիշերին կը բանար անիկա իր աչքերը խցիկէն հեռու հայրենի տան պարտէզներուն վրայ: Բայց կը պրկուին իր հոգիին լարերը, անոր մտքին վրայ անթառամ պատկերը աղջկան, որուն աչքերէն անմեղութիւնը կը նայի սրտառուչ եւ յանկուցիչ, բոց շառած ճրագի մը հանգոյն, որ երջանկութիւնը ունի իր կոկոն գեղեցկութեան:

Անիկա ան է, որուն կապուած էր իր ճակատագիրը, համաձայն ընտանեկան անքակտելի աւանդութեան, որ երբեմն դեռ աշխարհ չեկած եւ կամ օրրանէն կը սկսի: Ու տարիները առաջին մանկութեան, պատմութեան, քով քովի, աչք աչքի, լեռներու մէջ, ջուրերուն վրայ, այգիներու շուքերուն եւ խոր անտառներու սրտին: Անոնք մեծցան իրարու համար, իրարու մէջ, եւ այդպէս մտան կեանքի ոսկի դռնէն: Ո՛վ դժբախտ երազ թեթեւ թեւերու:

Տարին այդ աղջիկը լեռնէն անդին, ուրիշներու: Պատճառը մի՛ հարցնէք, յաճախ այնքան սուտ է պատրուակը, որ ողբերգութիւններ կը ծնի:

Առանձին է պատանին, հալածելով իր երազը ջուրէ ջուր, այգիէ այգի: Անոր ետեւէն հաւատարիմ շուքի մը պէս՝ քոյրը որուն գորովը անբաւական է պատանիին կսկիծը մեղմելու: Ու մայրը, որ սրտի ցաւէն կը գոցէ աչքերը, մէկ հատիկ իր տղուն տառապանքին անկարող տոկալու: Այսպէս է կեանքը եւ այսպէս կը սկսին դանդաղ մահերը, որոնք մեզի կու գան առանց հարցնելու: Ի՛նչ անհասկնալի է քերթուածը մեծ մարտիրոսութիւններուն, ինչո՞ւ մահն ու գեղեցկութիւնը այսքան ոյժով կապուած են իրարու: Չկայ ցաւ մը աւելի ահեղ եւ անպատմելի քան ցաւը մորթուած աղանիին, որուն արիւնը մեր սիրտէն է որ կը հոսի:

Ո՛վ իրեն ըսաւ թէ վանք մը կար հեռաւոր լեռներու սրտին, որուն դուռնէն մարդ կը թռնուէր բոլոր ցաւերը եւ կ'երթար ներս խաղաղութիւն ապրելու: Պատկերը աճեցաւ անոր մտքին եւ մենաստանը իր երազը եղաւ, հետզհետէ իրեն մօտեցող, զինք կանչող: Յստակ ճառագայթ է իր մտքին առաւօտը՝ երբ զարկաւ դուռը հնօրեայ վանքին, դռնապանին մոխիր ժպիտը եւ իր մուտքը:

Ու այդպէս անցան ամիսներ, տարիներ, դանդաղ, բայց արագ ծերութեան բարիքով: Ոչինչ կը զգար, ոչինչ կը մտածէր, շատ պզտիկ էր աշխարհը, բայց գեղեցիկ էին

երազները, որոնք աշխարհ մը կը բերէին իրեն:

Օր մը, իրիկնադէմին, ոսկի մագերով կին մը տրտում բայց գեղեցիկ, կեցաւ վանքին դրան: Դռնապանը վախով բացաւ դուռը ու երեք անգամ խաչակնքեց: Մենաստանը իր գոյութենէն ի վեր նման ուխտաւոր մը չէր ունեցած:

Օրեր շարունակ, տեսակ մը նախանձով խօսուեցաւ երիտասարդ վանականի այցի եկած քոջ մասին: Օրերով վառ մնաց այդ հետաքրքրութիւնը բոլոր շրթներուն վրայ: Վանականներէն շատերու հոգիին մէջ սկսած էր ապրիլ վանքի հորիզոնէն անդին գտնուող աշխարհի պատկերը: Փոխուած բան մը կար վանքին՝ ինչպէս հոգիներուն մէջ: Դռնապանն անգամ, հակառակ իր տարիքին, յաճախ կը բանար դուռը եւ հեշտանքով կը նայէր այն ճամբուն՝ որ տարած հեռացուցած էր ոսկի մագերով այդ գեղեցկուհին, լեռներէն անդին հալող արեւին նման:

Գեղանի կնոջ այցելութիւնները յաճախադէպ եղան իր երիտասարդ եղբօր, սակայն կը շատնար տակաւ խռովքը վանականներուն: Կամաւոր այդ չքաւորները նախանձն ունէին ուրիշներու պուտ մը երջանկութեան: Նախանձը կուպրէ ծաղիկ է նոյնիսկ աստուածներու հոգիէն ներս, անիկա չի վախնար մահէն, եւ ուժեղ է մեր բոլոր կիրքերէն:

Վերջին այցելութենէն օր մը վերջ, վանահայրը իր մօտ կանչեց երիտասարդ վանականը՝ եւ իրեն ըսաւ բաներ՝ խիստ ու շար, գեղեցիկ այցելուհիի մասին: Երիտասարդը լսեց բոլորը, խաղաղ ու անտարբեր, չբողոքեց, չխնդրեց. աշխարհը շար էր, շատ շար: Երբ դուրս ելաւ վանահօր խուցէն, բոլոր նայուածքները իրեն սեւեռուած էին: Ինք հանդարտ ու անխօս, դէպի իր խցիկը կ'երթար, քակուած, անշատուած կեանքէն եւ զայն անուշող բոլոր իրերէն: Ոչ մէկ ցաւ կ'ազդէր իրեն: Մեռնիլը ի՞նչ քաղցր է երբ զգուանքը մարդերուն թառանչքի պէս կը վազէ մեր հոգիին վրայ թմրած: Վանահօր խօսքերէն դեռ փշրանքներ կը յամենային իր մէջ. նոյն օրն իսկ պատրաստ էր հեռանալ վանքէն:

Ձմեռ էր եւ առաջին ձիւնը ծածկեր էր գետինը: Վտարանդի երիտասարդը յամր մէգի մը մէջէն կարծէք, դուրս դրած էր ինքզինքը վանքի մեծ դռնէն, թափառկոտ ստուերի մը պէս եւ պատին կռթնած կը կենար: Իր երեսին փշող սառուցիկ հովն անգամ չէր արթնցուցած զինք իր թմբիրէն: Յոգնած, շատ յոգնած կը զգար ինքզինքը: Կեանքը այսքան տուած էր իրեն, եւ մահը մեծագոյն պարգեն է կեանքէն անժառանգներուն:

Ձմեռ էր, ցուրտ, գիշեր: Անոր ոտքերը չէին կրնար զատուիլ այն սեմէն, ուր պատանութիւնը մը եւ երիտասարդութիւն մը թաւալեր էին: Իջաւ ծունկի, գլուխը թեւերուն մէջ: Կ'աղօթէր եւ կ'ուզէր: Ի՞նչ կ'ուզէն մարդիկ, երբ կ'իյնան իրենց երազի դիակին վրայ:

Առտուն, երբ մեծ դուռը բացուեցաւ, ձիւնը պատին քով կամարիկ մը յօրինէր էր: Դռնապանը ափով մէկդի ըրաւ ձիւնին խաւը. ոսկի մագեր կը շողային ձիւնին տակ: Երիտասարդ վանականը կը հանգչէր իր աշխարհէն:

Վանքին քովիկը թաղեցին զայն, դուրս հասարակաց գերեզմանոցէն: Դռնապանը անոր հողակոյտին յարմարցուց գամով ագուցուած տախտակէ խաչը:

Յաջորդ օրը, ամէնքը, ամօթով ու զարմանքով տեսէր էին որ գեղանի նոնենի մը, ձիւնին մէջ, իր ծաղիկները կը բանար հողակոյտին վրայ երիտասարդ վանականին:

Նոնենի մըն էր, աղուոր ու անոյշ. եւ ձմեռուան ձիւններուն իր ծաղիկները կը բանար, արիւնէն աւելի կարմիր ծաղիկներ, նման պզտիկ սիրտերու: